ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 15.01.2010Թ. ԹԻՎ 1/04Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՎԵԼՎԱԾ

9. Տիպաբանություն

Ապահովագրական գործառնությունների միջոցով փողերի լվացման սխեմա

1) Կիրառելիության շրջանակը

Սույն տիպաբանությամբ[1] ներկայացվող գործարքների սխեման կարող է վերաբերել հաշվետվություն տրամադրող հետևյալ անձանց՝

ա. բանկեր,

բ. ապահովագրական ընկերություններ,

գ. ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձինք:

2) Սխեմայի նկարագիրը

Ապահովագրական գործունեությունը գրավիչ գործիք է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար, քանի որ ապահովագրական պոլիսների զգալի մասը փաստացի վաճառվում է բրոքերների և գործակալների միջոցով և հաճախ միայն այս միջնորդներն են անմիջական շփում ունենում հաճախորդների հետ:

Ապահովագրական ընկերությունների ներգրավմամբ փողերի լվացման սխեման կարող է իրականացվել ինչպես հաճախորդների կողմից (կամ միջնորդ կազմակերպության օգտագործմամբ) տվյալների կեղծմամբ ապահովագրական դեպք ցույց տալու, այնպես էլ ապահովագրական պոլիսներից թույլատրելի ժամկետում հրաժարվելու միջոցով: Ստորև ներկայացված տիպաբանությամբ բնութագրվող գործարքները, որպես կանոն, կատարվում են քայլերի հետևյալ հնարավոր սցենարներով.

ա. «Ա» հաճախորդը արտասովոր պայմաններով կամ տվյալ գործարար միջավայրին ոչ բնորոշ ապահովագրական պայմանագիր է կնքում «Բ» ապահովագրական ընկերության հետ՝ կատարելով ապահովագրավճարներ: Ընդ որում, պայմանագրում որպես շահառու կարող է նշվել ինչպես ապահովադիրը, այնպես էլ այլ (հաճախ ապահովադրի հետ փոխկապվածություն չունեցող) անձ: Այնուհետև «Ա» անձը, միայնակ կամ «Գ» միջնորդ կազմակերպության հետ համաձայնության գալով, կեղծում է համապատասխան փաստաթղթերն ապահովագրական դեպք ցույց տալու և փոխհատուցում ստանալու նպատակով: Դրանով «Ա» հաճախորդը միայնակ կամ «Գ» միջնորդ կազմակերպության հանցակցությամբ կատարված կեղծիքի միջոցով ստանում է

[1] Տիպաբանությունը մշակվել է՝ հիմք ընդունելով ՖԱԹՖ-ի կողմից 1995-1996թթ. և 2003-2004թթ. հրապարակված համապատասխան փաստաթղթերը www.fatf-gafi.org:

հանցավոր եկամուտներ, որոնք որպես ապահովագրական ընկերությունից ստացված փոխհատուցում՝ կարող է որպես օրինական ծագմամբ գումար անխոչընդոտ շրջանառել տարբեր ոլորտներում:

- Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը



բ. «Ա» հաճախորդը «Բ» ապահովագրական ընկերության հետ կնքում է ապահովագրական պայմանագիր, որտեղ որպես ապահովագրավճարներ կատարող կողմ նշվում է երրորդ՝ հաճախ փոխկապվածություն չունեցող անձ: Այնուհետև պայմանագրում նշված թույլատրելի ժամկետի շրջանակներում պայմանագիրը չեղյալ հայտարարելու և գումարը ետ վերադարձնելու պահանջ է ներկայացնում ապահովագրական ընկերությանը: Նշված քայլերի հաջորդականությամբ իրականացվող գործարքներն ապահովագրավճարներ կատարողի կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն ապահովագրական ընկերության ներգրավմամբ օրինականացնելու և ապահովադրին փոխանցելու նպատակ են հետապնդում:

- Գործառնությունների սխեմատիկ նկարագիրը



3) Եզրահանգում

Ներկայացված սխեմաներով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ պարունակում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

ա. Սահմանված սխեման բնութագրող չափանիշներն են՝

1) ապահովագրավճարների ակնհայտ անհամապատասխանություն ապահովադրի գործարար բնութագրին և եկամուտներին,

2) ապահովագրավճարների մուծում երրորդ (հաճախ փոխկապվածություն չունեցող) անձի կողմից,

3) ապահովադրի և շահառուի ֆորմալ փոխկապվածության բացակայություն,

4) ապահովագրական դեպքի վաղաժամկետ և կասկածելի հանգամանքներով ի հայտ գալը,

5)ապահովագրական պայմանագրի վաղաժամկետ դադարեցում և ապահովագրավճարների ետ ստացում:

բ. Սահմանված սխեմայով հատկորոշվող գործարքներին առնչվող ՓԼ/ԱՖ ռիսկերը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

1) հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն,

2) պայմանագրի հիմք հանդիսացող փաստաթղթերի հավելյալ ուսումնասիրություն,

3) ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների մանրամասն ուսումնասիրություն, հավելյալ փաստաթղթերի պահանջի ներկայացում,

4) ապահովագրական պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման դեպքերի մանրամասն ուսումնասիրություն, իրական պատճառների բացահայտում,

5) տեղեկատվության արդյունավետ փոխանակում գործընկերների, իրավասու պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ: